

«ՀԵՆՔԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ» ԴԵՐԸ
ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Թարգմանությունն ամեն երկրի և նրա ժողովրդի, ամբողջ մարդկության հոգևոր մշակույթի անբաժան մասն է։ Առանց մշակույթի, գրականության ծագման և առաջացման անհնար է թարգմանության ծագումն ու առաջացումը և ընդհակառակը։ Չկա մի ազգային մշակույթ, որը չի ծաշակել թարգմանության ազդեցությունն իր սեփական գրականության վրա։

Ի տարբերություն հասարակական-քաղաքական, գիտատեխնիկական թարգմանությունների գեղարվեստական թարգմանությունը երկու մշակույթների փոխազդեցության և համագործակցության արդյունքն է։

Ինչպես Ա. Ֆյոդորովն¹ է նշում՝ թարգմանությունը «պատուհան» է բացված դեպի մի այլ աշխարհ։ Որպեսզի թարգմանիչը ստեղծի «պատուհան» ուրիշ երկրում, հարկավոր է որոշակի գիտելիք բացվող իրականության առջև, որն անվանվում է «հենքային գիտելիք»։

Ե. Վերեշագինը և Վ. Կոստոմարովը² խոսքային հաղորդակցման մասնակիցների ընդհանուր գիտելիքն անվանում են «հենքային գիտելիք»։

Օ.Ախմանովան³ «հենքային գիտելիքը» սահմանում է որպես «խոսողի և լսողի գործածած իրավությունների փոխադարձ գիտելիք», որը լեզվական հաղորդակցման հիմքն է։

Ըստ Բար-Հիլլելի՝ իմաստալից թարգմանության համար պահանջվում է «հենքային գիտելիքի» տիրապետում։ Սարդկանց մշակութապատմական բառապաշարը որոշվում է ոչ միայն խոսքի ձևերով, այլև բովանդակությամբ։ Բնագրի լեզվի քերականության և բառապաշարի իմացությունը բավական չէ, որպեսզի թարգմանիչը կարողանա ճիշտ վերարտադրել տեքստը։ «To be or not to be» արտահայտությունը ճիշտ հասկանալու համար հարկ է ոչ միայն կարդալ Վ. Շեքսպիրի «Համլետ» ողբերգությունը, այլև Շեքսպիրի շատ և շատ ստեղծագործություններ։ Այդ իսկ պատճառով բնագիրն ավելի խոր հասկանալու և վերարտադրելու համար թարգմանիչը պետք է հստակ պատկերացում ունենա տվյալ ազգի մշակույթի մասին, որն իր մեջ պարունակում է նյութական և հոգևոր արժեքներ։ Այն արժեքները, որոնք կարող են բացակայել այլ երկրներում, ստեղծում են բնագրի լեզվի ազգային-հասարակական մշակութային ֆոնը։ Վերջինս իր արտացոլումն է գտնում տվյալ ազգի լեզվում և ստեղծում է դրա «հենքային գիտելիքը»։

Ըստ ծագման «հենքային գիտելիքը» ունի երեք տարբաժանում.

1. համամարդկային
2. տարածաշրջանային

3. Երկրագիտական:

Վերջինս կապված է ազգային մշակույթի հետ և դա այն գիտելիքն է, որն օգտագործում են որոշակի էթնիկական և լեզվական ընդհանրություններ ունեցող մարդկանց խմբերը:

«Հենքային գիտելիքը» օգտագործում են ինչպես գեղարվեստական ստեղծագործությունների պատկերավորման, այնպես էլ գեղարվեստական զուգադրությունների, ակնարկների, այլաբանությունների, ծաղրերգությունների, տեղական գունագեղության համար:

Այն, ինչ հայտնի է բնագրի ընթերցողին որպես նրա «հենքային գիտելիք», թարգմանող լեզուներում արտահայտվում է պարզաբանումով: Լրացումը, որը կրում է որոշակի տեղեկություն և ենթադրվում է, որ ծանոթ է բնագրի ընթերցողներին, բայց ծանոթ չէ թարգմանող լեզվի ընթերցողներին, համարվում է թարգմանության սովորական միջոց, որի նպատակն է թարգմանությունն ընթերցողին լիովին ներկայացնել բնագրի էությունը:

Ի հակադրություն լրացման, թարգմանության մեջ օգտագործում են փոխարինումներ:

"Fleet street can make or break a politician".

Ցանկացած անգլիացու հայտնի է, որ Ֆլիթ Սթրիթում էր գտնվում Բրիտանիայի թերթերի և ամսագրերի օջախը, սակայն հայ ընթերցողը կարող է չիմանալ այդ, ուստի թարգմանության մեջ հարկ է նշել «Անգլիական մամուլը կարող է ստեղծել կամ կործանել քաղաքական գործչին»:

Շատ հաճախ փոխարինումներն ունեն ընդհանրացման բնույթ, այսինքն՝ երբ բառը փոխարինվում է ավելի ընդհանուր բառի իմաստով, որն ավելի հայտնի է թարգմանող լեզվի ընթերցողին:

Ինչպես Լ. Բարիսուդարովն* է նշում՝ թարգմանության միջոցների օգտագործումը թարգմանչից պահանջում է «չափի զգացում», քանի որ տարբեր տեսակի փոխարինումների չարաչափում կարող է հասցնել բնագրի իմաստաբանական և ոճական աղավաղման: Թարգմանիչը պետք է մեկնաբանի ընթերցողին անծանոթ կամ անհասկանալի երևույթները, բայց նա չպետք է փոխարինի դրանք թարգմանող լեզվի ընթերցողին ծանոթ և սովորական երևույթներով ու հասկացություններով:

Զնայած համամարդկային «հենքային գիտելիքը» հեշտ է թարգմանվում, քանի որ այն հայտնի է բոլոր մարդկանց, այնուամենայնիվ, կան բազմաթիվ բառեր, որոնք անվանում են սովորական հասկացություններ և երևույթներ ու միևնույն ժամանակ արտահայտում են իմաստաբանական և հուզական «հենքային երանգներ»:

Օրինակ՝ *սպիտակ գույնը* Հնդկաստանում սգո նշանն է:

Tower's ravens – «Թաուերի ագռավները» Բրիտանական թագավորության խորհրդանիշն է, որոնց բնաջնջումը կհամարվի Անգլիայի վախճանը:

«Հենքային գիտելիքը» պատմական երևույթ է: «Հենքային գիտելիքն» առաջանում, զարգանում է և դրա մի մասը աստիճանաբար մոռացվում է: Ըստ

Վ. Վինոգրադովի⁵ կախված տնտղությունից հենքային գիտելիքը բաժանվում է երկարատև (հիմնական) և կարճատև (երկրորդական) «հենքային գիտելիքի»: Չիմնական «հենքային գիտելիքը» կազմում է ազգային հոգևոր մշակույթի հիմքը և փոխանցվում է սերնդից սերունդ:

Ըստ Ե. Վերեշագինի և Վ. Կոստոմարովի՝ կոնկրետ ժամանակի տեսակետից հենքային գիտելիքը լինում է «ժամանակակից և պատմական»:

Ժամանակակից և պատմական երկարատև հենքային գիտելիքը խոչընդոտ չի հանդիսանում տեքստի յուրացման համար, քանի որ այն մտցված է բացատրական, երկլեզու, հանրագիտարանային և նման այլ բառարաններում:

Օրինակ՝ *Grundy—Гранди* (персонаж вышедшего в 1798г. романа Т. Мортоня: законодательница общественного мнения в вопросах приличия):

Ժամանակակից և պատմական կարճատև «հենքային գիտելիքը» թարգմանության այս ասպարեզում առկա դժվարություններից մեկն է: Այն արագ գործածության մեջ է մտնում և արագ էլ մոռացվում է, ուստի երևան չի գալիս բառարաններում:

The bride's father took one of her shoes and gave it to the bridegroom, who *tapped the bride's head with it*⁷.

«Հարսնացուի հայրը վերցրեց նրա կոշիկներից մեկը և տվեց այն փեսային, որն էլ թեթև խփեց դրանով հարսնացուի գլխին»: Իհարկե հայ ընթերցողին կթվա զավեշտական ու ծիծաղելի այս նախադասությունը: Հետևյալ երևույթը՝ «խփել կոշիկով հարսնացուի գլխին» կապված է սովորության հետ, որը նշանակում է, որ հարսնացուն այլևս չպետք է հնազանդվի իր հորը, այսուհետև նրա տերն իր ամուսինն է: Սա շատ հին սովորություն է, որն այժմ անհետացել է: Ուստի թարգմանիչը պետք է հաշվի առնի այն և մեկնաբանի վերը նշված նախադասությունը կամ համատեքստում կամ էլ տողատակի ծանոթագրությամբ:

Հատկապես «հենքային գիտելիքի» իմացությունից է կախված «լեզվական ակնարկների»⁸ ճիշտ յուրացումը: «Լեզվական ակնարկներն» արտահայտում են ակնարկներ դարձվածքներից, ասացվածքներից, առակներից, թևավոր խոսքերից: Ինչպես հայտնի է, թևավոր խոսքերի և արտահայտությունների հիմնական աղբյուրը համարվում է հին դիցաբանությունն ու պատմությունը, գրականությունը, «Աստվածաշունչը», թատրոնը, կինոն, մուլտիպլիկացիոն ֆիլմերը, իսկ արդի ժամանակներում՝ հեռուստատեսությունը և հաղորդակցման այլ միջոցներ:

Օրինակ՝ *Uncle Scrooge* - ազատության մարմնավորումն է, *Tom and Jerry* - անհամբերաշխության խորհրդանիշն է, որոնք առաջացել են հանրաճանաչ աներկյան մուլտերիալներից:

Ինչ վերաբերում է պատմական արտահայտություններին, որոնք դարձել են թևավոր խոսքեր և առնչվում են մարդկության համաշխարհային պատ-

մությանը համեմատաբար ավելի հեշտ են թարգմանվում՝ ի տարբերություն այն պատմական արտահայտությունների, որոնք անհայտ են թարգմանող լեզվի ընթերցողներին կամ էլ քիչ են հայտնի:

Օրինակ՝ 17-րդ դարի պառլամենտական ուժերի առաջնորդ Օլիվեր Կրոմվելը մինչև գետն անցնելը, որպեսզի հարձակվի թագավորական բանակի վրա, իր զորքերին դիմել է հետևյալ խոսքերով. *"Keep your power dry"* «Չոր պահեք վառողը», որը ներկայումս օգտագործվում է «պատրաստ լինել անհնարին գործողությունների» փոխաբերական իմաստով:

Բանախյուսական և գրական գեղարվեստական ակնարկները ճիշտ հասկանալու և վերարտադրելու համար ևս պահանջվում է լայն, հանրագիտարանային, մշակութային և երկրագիտական բնույթի գիտելիք՝ «հենքային գիտելիք»: Վերը նշված ակնարկներում պարունակվում է տեղեկություն բանախյուսական և գեղարվեստական հերոսների ապրելակերպի, բնավորության գծերի, գործունեության մասին:

Օրինակ՝ *"a peeping Tom"* «բավականին հետաքրքրասեր մարդ», որը բառացի նշանակում է «ծիկրակող թռնո՜ղ» վերցված է «Լեդի Գոդիվա» լեգենդից:

Բնական է, որ բնագրի «հենքային գիտելիքը» չի համընկնում թարգմանող լեզվի մարդկանց «հենքային գիտելիքին»: Ուստի անխուսափելի են «կորուստները» թարգմանության ժամանակ և թարգմանչին միշտ չի հաջողվում փոխանցել «հենքային գիտելիքը», որը պայմանավորված է դրա լավագույն իմացությամբ: Այդ իսկ պատճառով ինչպես Ա. Շվեյցերը⁹ է նշում՝ թարգմանչի հենքային գիտելիքը և թարգմանվող տեքստի նրա լիակատար իմացությունը համարվում է թարգմանության կարևոր պայմանները: Երբ լեզվական նշանները չեն ենթարկվում մեկնաբանման, միայն «հենքային գիտելիքի» և թարգմանչի կենսափորձի հիման վրա կարելի է ճիշտ ենթադրություն անել տեքստը համարժեքորեն վերարտադրելու համար:

1. Федоров А. В., Искусство перевода и жизнь литературы: Советский писатель Ленинградское отделение, 1983, стр.13,14.

2. Вережанин Е. М. Костомаров В. Г., Язык и культура, Издательство Московского Университета, 1973, стр. 126.

3. Ахманова О.С., Словарь лингвистических терминов. М., 1966, стр.498.

4. Бархударов Л. С., Язык и перевода, Издательство " Международные отношения", Москва 1975, стр. 131.

5. Виноградов В. С., Лексические вопросы перевода художественной прозы, Изд — во МГУ, М. 1978, стр. 105.

6. New English—Russian Dictionary, Edited under the Supervision of Academician Yu. D. Апресян, Russky Yazyk Publishers Moscow.1999.

7. Carry on Reading, Blue Series Book 3, By S.A. Stagg and J. A. Wynne, Scholfield & Sims LTD Huddersfield, p 31.

8. Տես Գիրունյան Գ. Ս., «Գրական անդրադարձի» որպես արտահայտչական հնարի մեկնողական ընդգրկումը», ատենախոսություն ք.գ.ք., Եր. 2005:

9. Швейцер А. Д., Теория перевода, " Наука " Москва 1988, стр. 55.